ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2024 թվականի N 1731-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-069-0070-0020 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՎ ՃԻՇՏ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, հիմք ընդունելով գրանցված իրավունքի N 29082024-06-0063 վկայականը, «ՎԱՎԱ ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը՝

որոշում եմ.

1. Ալավերդի համայնք, գյուղ Ճոճկան, 6-րդ փողոց, 41 հասցեում գտնվող, N 29082024-06-0063 սեփականության իրավունքի վկայականով գրանցված, կադաստրային քարտեզի 06-069-0070-0020 ծածկագրով հողամասի մակերեսը ուղղել և հաստատել փաստացի ճիշտ 2.2303 հա մակերեսը և գրանցել ճիշտ գծային չափերով՝ համաձայն որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՊՈՒՄԱՇՅԱՆ**